# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 06

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2015Թ. ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ:

Նիստին մասնակցում էին համայնքի 10 ավագանիներից 8-ը՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ, Ա. ՋԻՐՈՅԱՆ, Ա. ՄՈՍՈՅԱՆ, Ե. ԴԱՎԹՅԱՆ, Վ. ՄՀԵՐՅԱՆ, Ա. ՄԵԼԻՔՅԱՆ,Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ,Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստը վարում էր քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Արձանագրությամբ՝ Գ. ՌՍԿԱՆՅԱՆԻ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

ՀԱՐՑ-79. ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն >> ՊՈԱԿ <<Գեղարքունիք >> մասնաճյուղի մարզային կենտրոնի վարչական և լաբորատոր մասնաշենքերը ՀՀ Կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվեկշռից Մարտունի քաղաքային համայնքի հաշվեկշիռ փոխանցելու խնդրանքով ՀՀ վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյանին ուղերձով դիմելու մասին>> ավագանու որոշում:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-80.<<Մարտունու մշակույթի տան 1-ին հարկի 18 և 19 սենյակների վարձակալ Միեր Բաղդասարյանի կուտակված վարձավճարի պարտքը զիջելու և տարածքը հետ վերցնելու մասին>> ավագանու որոշում:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-81<<Մարտունի համայնքի 2015թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին >> ավագանու որոշում:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ- 82.<<Նռան հատիկ >> հանրապետական մանկապատանեկան թատերական ամենամյա փառատոնին Մարտունու ՄՊԿ-ի <<Եղեգն >> թատերախմբի մասնակցությունն ապահովելու համար գումար հատկացնելու մասին:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-83.<<Մարտունի քաղաքի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ում և Մարտունու Գեղարվեստի դպրոցում սովորող այլ համայնքի բնակիչ հանդիսացող երեխաների ուսման վարձի փոխհատուցում տրամադրելու առաջարկով ուղերձով Մարտունու տարածաշրջանի համայնքների ղեկավարներին դիմելու մասին:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ 84.<<Մարտունի քաղաքի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ում սովորող երեխաների ուսման վարձավճարի նոր չափ սահմանելու մասին>> ավագանու որոշում:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-85.<<Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանին և մեկ ուղեկցողի Ռուսաստանի Դաշնություն և Հունաստանի Հանրապետության Կավալա քույր քաղաք գործուղելու համաձայնություն տալու մասին >> ավագանու որոշումը:

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ-86.<<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի 1-ին հարկի թիվ 19 սենյակի կուտակված վարձավճարի գումարը զիջելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը

*ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՀԱՐՑ 87.<<Դիմումների քննարկում>>:

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը` կողմ`8 , դեմ. ձեռնպահ չկա.

Մարտունու քաղաքապետ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ`

Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## *ՈՐՈՇՈՒՄ N 79*

*«14»-ը օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն >> ՊՈԱԿ <<Գեղարքունիք >> մասնաճյուղի մարզային կենտրոնի վարչական և լաբորատոր մասնաշենքերը ՀՀ Կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվեկշռից Մարտունի քաղաքային համայնքի հաշվեկշիռ փոխանցելու խնդրանքով ՀՀ վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյանին ուղերձով դիմելու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և նկատի ունենալով, որ մարզային կենտրոնի ախտահանման մասնաշենքում ավելի քան քսան տարի, դեռևս 1990-ական թվականներից ապօրինի կերպով բնակվում են Մարտունի քաղաքի սոցիալապես անապահով մոտ տասնհինգ բազմանդամ բնտանիքներ, որոնց քաղաքապետարանը ի վիճակի չէ ապահովել բնակարաններով, մասնաշենքը զուրկ է կենցաղային կոմունալ բոլոր տեսակի հարմարություններից, իսկ քաղաքապետարանը իրավասու չէ այդ տարածքում կատարելու վերանորոգման, վերակառուցման աշխատանքներ մասնաշենքում ապրող բնակիչների համար.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն >> ՊՈԱԿ <<Գեղարքունիք>> մասնաճյուղի մարզային կենտրոնի վարչական և լաբորատոր մասնաշենքերը իրենց սպասարկման տարածքով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հաշվեկշռից Մարտունու քաղաքային համայնքի հաշվեկշիռ փոխանցելու խնդրանքով ուղերձով դիմել ՀՀ վարչապետ պարոն Հովիկ Աբրահամյանին:
2. Մասնաշենքերը հատկացնել սոցիալապես անապահով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող բնտանիքներին:
3. .ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն >> ՊՈԱԿ <<Գեղարքունիք >> մասնաճյուղի մարզային կենտրոնի նոր մասնաշենք կառուցելու համար Մարտունի քաղաքի Զորավար Անդրանիկ թաղամասում հատկացնել 2600 քմ տարածք:
4. Հարցը քվեարկվեց կողմ՝ 8, դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանին՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 80*

*«14»-ը օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

«Մարտունու մշակույթի տան 1-ին հարկի 18 և 19 սենյակների վարձակալ Մհեր Բաղդասարյանի կուտակված վարձավճարի պարտքը զիջելու և տարածքը հետ վերցնելու մասին» ավագանու որոշումը:

Նկատի ունենալով, որ Մհեր Բաղդասարյանը շուրջ 5 տարի է, ինչ չի օգտագործել իր կողմից վարձակալած տարածքը, տարածքում կատարել է բարեկարգման, վերանորոգման աշխատանքներ, սակայն այլևս ցանկություն չունի նշված տարածքի վարձակալությունը շարունակելու:

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Զիջել Մհեր Բաղդասարյանի կողմից Մարտունու մշակույթի տանը վարձակալած տարածքի վարձավճարները, որը առ 28.07.2015թ. դրությամբ կազմում է 310.000 (երեք հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

2. Տարածքը հետ վերցնել քաղաքապետարանի տրամադրության տակ և տալ այլ վարձակալի:

Հարցը քվեարկվեց կողմ` 8, դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ` Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 81*

*«14»-ի օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

«Մարտունի համայնքի 2015թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով,

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Մարտունի համայնքի 2015 թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 2108000 (երկու միլիոն մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ տեղափոխել՝

ա)«Նախադպրոցական դպրոցներում կրթություն» նախահաշվի 4239 հոդված 440000 (չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, վարագույրներ և բիլեր գնելու նպատակով:

բ)«Աղբահանություն և սանիտարական մաքրում նախահաշվի»

4239 հոդված 700000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, Զիլ ավտոմեքենայի շարժիչը վերանորոգելու և պահեստամասեր գնելու համար:

գ)«Հանրակրթական դպրոցներում ուսուցում» նախահաշվի 4719 հոդված -630000 (վեց հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, անապահով ընտանիքների երեխաներին գրքերի արժեքը փոխհատուցելու համար:

դ)Մարտունու Գեղարվեստի դպրոցի նախահաշվի 4267 հոդված՝300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տնտեսական ապրանքների գնման համար և 4212 հոդված՝ 38000 ( երեսունութ հազար) ՀՀ դրամ:

2. «Մարտունի համայնքի 2015թ. բյուջեի ֆոնդային մասի օրենսդիր մարմիններ «Պետական կառավարման» նախահաշվի 5113 հոդվածից 3210000 (երեք միլիոն երկու հարյուր տասը հազար) ՀՀ դրամ տեղափոխել.

ա)Նույն նախահաշվի 5129 հոդված՝990000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ զրասենյակային կահույքի գնման համար:

բ)<<Մշակույթի տուն>> նախահաշվի 5129 հոդված՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ աթոռների գնման նպատակով:

գ)<<Նախադպրոցական կրթություն>> նախահաշվի 5129 հոդված՝990000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ՝չորս մսուր-մանկապարտեզների համար լվացքի մեքենայի ձեռք բերման և 980000 (ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝անկողնային պարագաների գնման նպատակով:

3.<<Ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի 5113 հոդվածից 1850000(մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Հանգստի մշակույթ, կրոն>> նախահաշվի 5134 հոդված՝1300000 ( մեկ միլիոն երեք հարյուր հազար ) ՀՀ դրամ՝ <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> եկեղեցու վերանորոգման նախագծային փաստաթղթերի պատրաստման, Մարտունու Գեղարվեստի դպրոցի նախահաշվի 5113 հոդված, 150000 ( մեկ հարյուր հիսուն հազար ) ՀՀ դրամ վերանորոգման աշխատանքների համար, կրթություն նախահաշվի 5113 հոդված 400000 ( չորս հարյուր հազար) ՀՀ դրամ պատուհանների վերանորոգման համար:

4.Մարտունի քաղաքի փողոցների փոսային վերանորոգման աշխատանքների լրացուցիչ գնում կատարելու նպատակով հատկացնել 2400000 (Երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.Մարտունի քաղաքի գերեզմանոցի ճանապարհների բետոնապատման, և վերանորոգման, քաղաքի փողոցների խճապատման և բարեկարգման աշխատանքների համար հատկացնել 4500000 ( չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

6. Գնումները կատարել ԲԸԱՀ հրապարակման:

Հարցը քվեարկվեց կողմ՝ 8, դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 82*

*«14»-ի օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Նռան հատիկ>> հանրապետական մանկապատանեկան թատերական ամենամյա փառատոնին Մարտունու ՄՊԿ-ի <<Եղեգն>> թատերախմբի մասնակցությունն ապահովելու համար գումար հատկացնելու մասին:

Հիմք ընդունելով <<Նախարեն>> կրթամշակութային ասոցիացիա ՀԿ-ի 09.07.2015թ. № 16 գրությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Մարտունու <<Եղեգն>> թատերախմբի մասնակցությունը <<Նռան հատիկ>> հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնին ապահովելու համար համայնքի բյուջեից հատկացնել 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2.Մարտունի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել Մարտունու ՄՊԿ-ի նախահաշվի 4221 հոդված:
Հարցը քվեարկվեց կողմ՝ 8, դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Ն. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 83*

*«14»-ը օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

«Մարտունի քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում և Մարտունու Գեղարվեստի դպրոցում սովորող այլ համայնքի բնակիչ հանդիսացող երեխաների ուսման վարձի փոխհատուցում տրամադրելու առաջարկով ուղերձով Մարտունու տարածաշրջանի համայնքների ղեկավարներին դիմելու մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարտունու երաժշտական դպրոցում և Գեղարվեստի դպրոցում սովորում են այլ համայնքների բնակիչ հանդիսացող երեխաներ, որոնցից յուրաքանչյուրի համար մեկ տարվա կտրվածքով Մարտունու երաժշտական դպրոցում Մարտունի համայնքի բյուջեից ծախսվում է 87600 (ութսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ Գեղարվեստի դպրոցում սովորող մեկ երեխայի համար ծախսվում է 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ոչ մի կերպ չի փոխհատուցվում ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետության կողմից տրամադրվող դոտացիայով և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11 րդ հոդվածի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Ուղերձով դիմել Մարտունու տարածաշրջանի բոլոր համայնքների ղեկավարներին և առաջարկել իրենց համայնքի բյուջեից գումար փոխանցել Մարտունի համայնքի բյուջեի համապատասխան հաշվի համարին, իրենց համայնքի բնակիչ հանդիսացող երեխաների ուսման համար ծախսվող գումարները փոխհատուցելու համար: Հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում և արդյունքների մասին տեղյակ պահել Մարտունու քաղաքապետարանին:
Հարցը քվեարկվեց կողմ՝ 8 , դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանի՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 84*

*«14»-ի օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

«Մարտունի քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում սովորող երեխաների ուսման վարձավճարի նոր չափ սահմանելու մասին»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարտունու երաժշտական դպրոցում կառուցվել է ջեռուցման նոր համակարգ, ավելացել են ջեռուցման համար կատարվող ծախսերը և հիմք ընդունելով երաժշտական դպրոցի տնօրենի 12.08.2015թ. № 11 գրությունը:

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Մարտունու երաժշտական դպրոց հաճախող երեխաների համար ուսման վարձը մեկ տարվա կտրվածքով ավելացնել 5000 (հինգ հազար) -ական դրամով՝ բոլոր խմբերի համար:

Հարցը քվեարկվեց կողմ՝ 8, դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանին՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ԶԻՐՈՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄԱՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 85

*«14»-ը օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

«Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանին և մեկ ուղեկցողի Ռուսաստանի Դաշնություն և Չինաստանի Հանրապետության Կալուգա քույր քաղաք գործուղելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշում:

Մարտունու «Սուրբ Մարիամ Աստվածածին» եկեղեցու վերակառուցման նպատակով Մարտունի քաղաքի գործարար բնակիչներից գումար հանգանակելու նպատակով Ռուսաստանի Դաշնություն և Մարտունի ու Կալուգա քույր քաղաքների միջև համագործակցության հետագա զարգացման նպատակով Կալուգա քաղաք մեկնելու անհրաժեշտությունից ելնելով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Համաձայնություն տալ Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանին և մեկ ուղեկցողի գործուղելու Ռուսաստանի Դաշնություն և Չինաստանի Հանրապետության Կալուգա քույր քաղաք:
Հարցը քվեարկվեց կողմ՝ 8 , դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄԱՆՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 86*

*«14»-ը օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի 1-ին հարկի թիվ 19 սենյակի կուտակված վարձավճարի գումարը զիջելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը

Նկատի ունենալով, որ քաղաքապետարանի 1-ին հարկի թիվ 19 սենյակը մոտ 1 տարի 6 ամիս օգտագործվել է քաղաքապետարանի համար որպես պահեստային տարածք, բացի այդ վարձակալի կողմից սենյակի վերանորոգման վրա ծախսվել է մոտ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումար.

<u>*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*</u>
<u>*ՈՐՈՇՈՒՄ Է.*</u>

1. 97400 ( իննսունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով զիջել տարածքի վարձակալ Թերեզա Սողոմոնյանի վարձավճարի կուտակված պարտքը:

Հարցը քվեարկվեց կողմ` 8, դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ` Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ` Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Վ.ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ
Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 87*

*«14»-ը օգոստոսի 2015թ.* *ք. Մարտունի*

<<Դիմումների քննարկում>>:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի սոցիալապես շատ ծանր վիճակում գտնվող ներքոնշված քաղաքացիներին 195000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ օգնություն տրամադրելու համար.

| Հ/Հ | Անուն,ազգանուն, հայրանուն | Գումարը |
|---|---|---|
| 1 | Բաղդասարյան Թամարա | 15000 |
| 2 | Փինայան Աղավնի Ժորժիկի | 10000 |
| 3 | Գրիգորյան Գոհար Արտաշեսի | 10000 |
| 4 | Սարգսյան Աբգար | 10000 |
| 5 | Հարությունյան Երջանիկ | 20000 |
| 6 | Թաղևոսյան Արեգնազան Հովհաննեսի | 20000 |
| 7 | Աղիլխանյան Քնարիկ Ալբերտի | 10000 |
| 8 | Հակոբյան Քնարիկ Պատվականի | 10000 |
| 9 | Հովհաննիսյան Վարդուշ | 10000 |
| 10 | Դասաբյան Զայնիկ | 10000 |
| 11 | Սահակյան Ռախսա | 10000 |
| 12 | Հովնիկյան Վերա Արարատի | 15000 |
| 13 | Ավագյան Անահիտ Աշոտի | 10000 |
| 14 | Հարությունյան Զոյա | 15000 |
| 15 | Սահակյան Նսրիբեկ | 10000 |
| 16 | Սահակյան Ֆրիդա Կոլյայի | 10000 |
| Ընդամենը՝ 195000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ | | |

1.Մարտունի քաղաքի բնակիչ Դավիթ Ժորայի Մոսոյանին պատկանող ՎԱԶ ավտոմեքենայի 22441 (քսաներկու հազար չորս հարյուր քառասունմեկ) դրամի չափով կուտակված տույժերի համար սահմանել արտոնություն:

Հարցը քվեարկվեց կողմ՝ 8 , դեմ ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ԶԻՐՈՅԱՆ

Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ